ՌՂԷ.

Վասն սարգիս [սառաֆեան] վարդապետին աքսորմանն որ եղև ի 9 սեպտեմբ, ի պատրիարգին նախանձուէ ֆէրմանաւ ի սամսոն առասքն, զիտեմ, զի լուայք, ընդ որ ամենեքեան ցաւեցան յոյժ ուղղափառք և հայք. և ասեն թէ ոմանք ի սառաֆից առնլոց են զիթլախն առ ի յետս դարձուցանելոյ, եթէ ողջ մնասցէ ի ճանապարհի, զի երկնչիմք թէ կորուսցեն, և անյայտ արասցեն։ Ժանտախտն փոքր մի դադարեցաւ. բայց թշուառութիւն քաղաքիս վասն պակասութեան տուրևառութեան վաճառի օր ըստ օրէ յաճախէ, որոյ պատճառ դնեն զերկրորդն արքայի, զորմէ և տրտնջեն յոյժ և խնդրեն զկորուստ նորա։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1758 սեպտ. 18. ի Կոստանդինուպոլիս)։

ՌՂԸ.

Ցաւք և հիւանդութիւնք տակաւին յաճախեն ի քաղաքիս և ժանտախտն կոտորէ զմեծս, և ծաղիկն զտղայս, որոց ոչ գոյ թիւ... գրեթէ ոչ մնաց տուն, յորում ոչ իցէ ողբ և կսկիծ վասն պէսպէս տառապանաց։ Իսկ վասն աքսորման սառաֆօղլու Սարգիս Վարդապետին գրեցի միանգամ, զի տարան զնա չղթայակապ ի կողմանս Կիպրոս կղզւոյն բերդարգել լինել անդ։ Այլ այժմ ոմանք յուղղափառաց գաղտ ի մէջ իւրեանց միաբանեալ ջանան յետս դարձուցանել զնա առնլով զիթլախն, բայց երկնչիմ գուցէ իմացեալ պատրիարգին հասուսցէ զկնի նորա զվճիռ մահու. քանզի ի հայոց կողմանէ ոչ ոք կայ նմա օգնական։ Ցաւուրս յայսոսիկ լուաք զուրախալի լուր յաղթութեան թագուհւոյն ի վերայ պռուշաց։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1758 նոյեմբ. 18. ի Կ. Պոլիս)։

ՌՂԲ.

Ասեն թէ սարգիս վարդապետն այժմ ի սախըզ է, և առեալ են վասն նորա զգիր ազատութեան, բայց միայն թէ կացցէ ի սախըզ։ (Հ. Յակոբոս վ. Զամչեանց առ Մելգոնեան, 1758 դեկտ. 18. [Կ. Պոլիս])։

Ռ.

Ի դեկտեմբերի 23 եղև եանղին մեծ յստամպոլ ի չաթլատը խափուն՝ սկսեալ այրիլ ի չորրորդ ժամէ գիշերոյն մինչև ի քսանևմիերորդ ժամ տունջեան, և այրեցան տունք աւելի քան զերկու հազարս, յորս էին ճամիք բազումք, զոր օրինակ քիւչիւկ այա սօֆիան, և այլք նմանք նմին, և մեծամեծ սարայք բազումք. եկ հուրն ի խօնախէ թաւուխճի պաշիին. և այրեալ զտունս՝ որ շուրջ զչաթլատը խափույովն զտափարական առ պարսպօք քաղաքին, դիմեաց ապա առ զառիվերն մինչ ի կոնակ սէտէֆճոց, և եկն վերջացաւ վերին ծայրըն եանղընին առ պարսպօք սուլթան սարայի կէտիկ փաշային, և ստորին ծայրն ի մէյտանն խատրրդայ իլիմանին։ Եւ թէպէտ չայրեցան տունք քրիստոնէից, սակայն քէսատութիւն առևտրոյ յաւելուլ սկսաւ ի վերայ առաջնոյ քէսատութեանն։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան, 1759 Յունվ. 2. [Կ. Պոլիս])։

ՌԼԱ.

Ասի թէ մերձ է յաւուրս յայսոսիկ լինիլ զաւակ թագաւորի երկրիս. ուստի և սկսան առնել պատրաստութիւնս տօնանմայի, սակայն խստութիւն եասախին դեռ օր քան զօր յաւելու և ոչ